ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՎՏԱՆԳԱՎՈՐ ԹԱՓՈՆՆԵՐԻ ՎԵՐԱՄՇԱԿՄԱՆ, ՎՆԱՍԱԶԵՐԾՄԱՆ, ՊԱՀՊԱՆՄԱՆ, ՓՈԽԱԴՐՄԱՆ ԵՎ ՏԵՂԱԴՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՄԻՋԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

2015թ. սեպտեմբերի 17-ին կայացած նիստում <<Հայաստանի Հանրապետությունում վտանգավոր թափոնների վերամշակման, վնասազերծման, պահպանման, փոխադրման և տեղադրման գործունեության լիցենզավորման>> միջգերատեսչական հանձնաժողովը քննարկել է <<Առողջ սունկ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված վտանգավոր թափոնների վերամշակման, վնասազերծման, պահպանման, փոխադրման և տեղադրման գործունեության լիցենզիա ստանալու հայտը և հետևյալ փաստաթղթերը.

1. <<Առողջ սունկ>> ՍՊԸ-ի կոմպոստի արտադրամասում կոմպոստի արտադրության տեխնոլոգիական նկարագիրը,
2. <<Առողջ սունկ>> ՍՊԸ-ի կանոնադրության պատճենը,
3. կազմակերպության պետական գրանցման վկայականի պատճենը,
4. սահմանային թույլատրելի արտանետումների թույլտվությունը,
5. <<Առողջ սունկ>> ՍՊԸ-ի Բյուրեղավանի մասնաճյուղի վնասակար նյութերի սահմանային թույլատրելի արտանետումների /ԱԹԱ/ նորմատիվների նախագիծը,
6. տեղեկություն մասնագետի մասնագիտական այլատրաստվածության մասին, ով պետք է իրականացնի լիցենզավորվող գործունեությունը:

Հաշվի առնելով վտանգավոր թափոնների անվտանգ փոխադրման, պահման և վերամշակման հարցի կարևորությունը, ինչպես նաև ներկայացված փաստաթղթերի լիակազմությունը՝ միջգերատեսչական հանձնաժողովն առաջարկեց նշված կազմակերպությանը տրամադրել վտանգավոր թափոնների վերամշակման, վնասազերծման, պահպանման, փոխադրման և տեղադրման լիցենզիա:

Ա. Ալեքսանդրյան		Գ. Ամատունի	
Ս. Գալստյան		Կ. Կարապետյան	
Ա. Առուստամյան		Ա. Ղազարյան	
Ե. Տերտերյան		Ի. Հակոբյան	